



երկասիրութեան կը հանդիպինք հետեւեալ խորագրով: «Տիրանայ վարդապետի Հայոց՝ պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից՝ Ատրներսեհի և Փիլիէի»: Հաստատաճք միայն կը գտնուին ի Ստեփանեան բառարանի: (Հին Գպ. եր. 763): Երեւի այս տեղեկութիւնն առնուած է մեր մայր ցուցակից (Կարկենան հր. № 499, նոր հմր. 511): Սոյն այս ձեռագիրը (Ձգօն գիրք № 3) Տիրանունի երկասիրութեան զիտում հետեւեալ վերնագիրն ունի որը ցուցակ կազմողից «ԲՅՈՒՅՈՒՆ Ե. Սիրանոյ (ուրեմն՝ Տիրանուն և ոչ Տիրան) հայոց վարդապետի պատասխանի հարցմանց թագաւորացն աղուանից Ատրներսեհի և Փիլիէի»: Կրուածքի սկիզբնաւորութիւնն է. «Անկախեալ զհրամանս և զխնդիրս ձեր յոյժ փութով և յաւերժ ըզձալի փափաքանօք ուրախ եղեաք ի անս իբրև ի պարգևս և ի ձիրս երկնառաքս»: «Կարձ յառաջարանից յետոյ՝ ըսկրուում են Տիրանունի լուծմունքները կամ մեկնութիւնները որոնք յօդուած յօդուած պատասխաններ են: Հարցումները ղկան: Առաջին յօդուածն է. «Ա. Արդ՝ սկիզբն աւուր առաւօտն և ոչ երեկոյն...»: վերջին յօդուածն է, որով և վերջանում է գրուածքը. «Մ. Արդ ոչ գիտէին զնա թէ ով է. զի ասէ Գա է որդի իմ իսկ աղանին էջ ի վերայ Յիսուսի իբրև որ զձեռն իւր զիցէ և ասասցէ. Սա է»:

Հայոց 50 թուին գտնում ենք տեղեկութիւն Տիրանունի մասին և Մխիթ. Այրիվանեցու մօտ. «Տիրանուն կաթողիկոս Աղուանից արար լուծմունք 500 դժար բանից» (Մպր. 1867, եր. 64):

Այսպէս ուրեմն մեր միակ ձեռագիրը ունի միայն 200 (Մ) լուծմունք, մինչդեռ Այրիվանեցուց առաջ բերուած տեղեկութիւնը ասում է 500 (ԵՃ): Կարծում ենք, որ այս տարբերութիւնը ծագում է ոչ թէ մեր ձեռագրի պակասաւորութիւնից, այլ բողոքագիր Բ և է դրերի շփոթութիւնից: Երեւի պէտք է լինէր յլուծմունք քմ: դժար բանից: Բենի և եչի շփոթութիւնները շատ յաճախ են բաւական է

որ բենի զիսի զիծը շտեմնուի արդէն ստացւում է եչ (բողոքագրի մէջ մանաւանդ):

Այսպէս ուրեմն՝ ցնոր տեղեկութիւն՝ կարող ենք ասել որ Տիրանունը զրեւ է ԵՊՆՆԵՐԵՂ զարի սկզբում է: Եւ յարեւ լուծմունք կամ պատասխան Աղուանից Ատրներսեհ և Փիլիէի պէ թագաւորների հարցմունքներին: Այս կամ արանց հետ նոյնանուն իշխանների մասին Հ. Ալիշանը տալիս է հետեւեալ տեղեկութիւնը. «Առնէրէն որդի Փ. Եւրդէի որ յիշի «Եւրդէստուածապահ և բնիկ տեր Սիւնեաց» կոչմամբ: կեայր ի կէս Ա դարու և յետ կիսոյն: (Մխական եր. 14): բայց արանից առաջ յիշւում է մի այլ Փիլիպոս վեցերորդ զարի Բ կիտում (Մխակ. եր. 17): Աղուանից պատմութեան մեջ յիշւում է Ատրներսեհ-ի-Փիլիպեան. «Զայս Ա արաղ-Տրդատ և զորդի նորա Ստեփաննոս՝ Սերսեհ-ի-Փիլիպեան ազգակիցն նորա սպան ի միում ժամու ի խորածորն, որ կոչի Գաղոյի վանք», (Կազանկ. եր. 272. 1860 Մոսկ.): Մխիթ. Այրիվանեցին Աղուանից թագաւորների շարքում գնում է. «Արաղ Տրդատ Ստեփաննոս, Առնէրէն: . . .» (հր. 1867, եր. 23): Արանցից աւելի ուշ ժամանակով յիշւում են Գրիգոր իշխանի որդիքը. «Աւագայ, Ատրներսեհ և Փիլիպպի» (Աղ. պատմ. եր. 273): Այս վկայութիւններից պարզ երևում է, թէ որչափ բազմաթիւ են Ատրներսեհներ և Փիլիպոսներ Աղուանքում և դրակից Սիւնիքում: որոնցից մի քանիսի ճիշտ ժամանակը որոշելը շատ դժուար է և անհաստատ: Միւս կողմից Աղուանից կաթողիկոսների շարքում (Կազանկ. եր. 274) Մխիթ. Այրիվան. եր. 24.) չէ յիշւում և ոչ մի տեղ Տիրանուն կաթողիկոս:

Սակայն այս մեր Տիրանունի ժամանակին ճիշտ յարմարում է «Տէր Յօհանն» կաթողիկոսը, «յեպիսկոպոսութենէ Ամարասայ կոչեցեալ յաթոռն» (Կաղ. եր. 275): Այս Տէր-Յօհաննի նախորդներն են՝ Տէր Աբաս ժամանակակից հայոց թուականին, Տէր Ալիբոյ (31 կամ 33 տարի գահակալած), Տէր Զաքարիա

(15 տարի), որին յաջորդում է ինքը՝ Տէր-Յոհաննայ կամ ինչպէս մենք կարծում ենք՝ Տիրանունը, եթէ միայն վերջինս կաթուղիիոս էր և ապրում էր Հայոց 50 թուականին, ըստ վկայութեան Սիւ. Այրիվանեցու: Գահակալում է 27 տարի: Տէր-Յոհաննայ անունների շփոթութիւնը կարող է մեկնուիլ Տէր Աւհան (Օհան) միջին ձևով:

Տիրանունի գրութիւնը մեր ձեռագրում գետեղում է հետևեալ դասաւորութեամբ. Ա. Թուղթ Արամայ, Բ. Տիրանուն, Գ. Խոստովանութեան զիր Անանիայի, Դ. Անանիայի Հայոց վարդապետի սակա բացայայտութեան թուոց: Այս վերջին երկուսի մասին տես մեր հրատ. „Որ խոստովանութեան“: Իսկ „Արամի թղթի“ մասին առիթ կունենանք խօսելու:

Մինչև այժմ յայտնի հայ ձեռագրերի ցուցակներից երևում է, որ այս չորս գրուածքն էլ գտնուել են այս մեր միակ օրինակում: Հրատարակուելուց առաջ ցանկալի էր նոր օրինակների գիւտը:



„Խորենացու Պատմութեան Ուսումնասիրութեանց“ հէնց առաջին զլիսում (եր. 4—7) խօսելով մեր հին մատենագրութեան մէջ յաճախ տեղի ունեցող Բարձրան-Բեան դէպքերի մասին, բերել էի իբրև օրինակ նաև „Կոնդր Արամազդ“ իւր Բարձրան-Բեան „Կոնդր Բեան կամ ճշտագոյն ևս՝ Կոնդր Բեան Արամազդ“ ընթերցուածով: Այս վերջին ընթերցուածով ձեռագրեր այժմ ոչ միայն մի, այլ մի քանիսն էն ինձ յայտնի որոնց մասին կիսօսիմ երբ դէպք ունենամ Խորենացու ինձ ծանօթ ձեռագրերի (մօտ 20) էմբելը և էմբելը Կոնդր Բեան-Բեանը որոշելու: Գիտնական բարեկամներիցս մէկը Ն. Բեան (կեղծ անուն), մի յօդուած հրատարակեց իմ գրածի առթիւ, առաջարկելով իւր բացատրութիւնը Խորենացու այդ մութ կէտի վերաբերութեամբ (տես „Արաքս“ 1890, զիբք Բ. եր. 59—62): Ընթերցողին թողնելով թէ իմ և թէ պ. Նուսնի յօդուածներից ինչորի մանրամասնու-

թեանցը ծանօթանալ անձամբ, այս չափս եմ միայն ստուծ որ Նուսնի Սասանեան հարստութեան Որմիզդ թագաւորների անունովն էր փորձում մեկնել Խորենացու „Ոչ Արամազդ որ, այլ ի կամեցողսն լինել Արամազդ, չորից ևս այլ անուանեցելոց Արամազդ, յորոց մի է և կունդ ոմն (այլ ընթ. Կոնդր-Բեան) Արամազդ“ ասացուածը (Խոր. Ա. 31): Խորենացին համեմատում է Տիրանունին և Արամազդներին: Բայց թէ Հայկազեան Տիրանուն համեմատում է անպատճառ „կունդ Արամազդի“ հետ և ոչ թէ „Արամազդի“ հետ ընդհանրապէս, այս չէ երևում Խորենացու հատուածից: Նուսնի հետաքրքրական և սրամիտ առաջարկութեան անպատճառ է և այն, որ Խորենացին էլ է միայն Կոնդր-Բեան է Սոհան Կոնդր-Բեան կարող էր գիտնալ միմիայն երեք Որմիզդ թագաւորներին, իսկ Գ. Բ. և Ե. Բ. Որմիզդներին (Ե. Բ. և Դ. Բ. դարում) չէր կարող ձանաչել: Թոյլ տալով նաև այն վարկածը, թէ Խորենացու „չորից“ բառը կարելի է կարգաւ „երից“, թէև դեռ մինչև օրս այդպիսի ընթերցուածով ձեռագիր յայտնի չէ, այսուամենայնիւ ինչորի դժուարութիւնը չէ վերանում: Կոնդր-Բեան Նուսնի Նուսնի և Առաջին Մարտիկից անմիջապէս յետոյ յիշում է Ներսէս (Մարտիկ) և Որմիզդ (երկրորդ) թագաւորներին այսպէս. „Բանգի լուեալ էր (Տրդատայ) զինամակալն Մարտիկ ընդ հնդկաց թագաւորին և ընդ արեւելեան խաքանայ, և զգորավարելն Ներսէսի՝ որ և թագաւորեաց ամս ինն, և Որմիզդի՝ որ ապա և նա թագաւորեաց ամս երիս՝ Կոնդր-Բեան“ (Բ. 3թ.): Մարտիկից յետոյ անմիջապէս թագաւորող Որմիզդը անշուշտ Որմիզդ Բ. ն է. (որի թագաւորութեան առաջին տարին ըստ Ներսէսի է 302 թ. Tabari etc. եր. 435): Բայց մեր ստորագծած „նահատակութեամբ“ բառը կարող է թերևս ցոյց տալ որ Խորենացուն յայտնի էր մի քանի Որմիզդ, անշուշտ Առաջինի տիտղոսը տալով Երկրորդին:

„Մահատակութեամբը“ մի ասացուած է,

որ իմ կարծիքով ճշտիւ համապատասխանում է արարացի պատմիչների «լատին» կամ «գլաուկ» և պարսիկ գրողների «թալու» և «արաբան» (բոլորն էլ «լատին» նշանակութեամբ) տիտղոսների: որ տրուում էին Որմիզդ Ա-ին (տես Մուսնի վերոյիշ. յօդ. սունուած Th. Noldeke, Geschichte der Persen und Araber zur Zeit der Sasaniden & Leyden 1879, էր. 43, ծան. 2): Մուսնին ենթադրում է, որ առաջ բերուած պարսիկներն երկու տիտղոսները յետին թարգմանութիւն են արարական «լատին» կամ «գլաուկ» - ի և այս բոլորը միասին թարգմանութիւն են հին պարսկական «արաբ» (=պարսկ. քաջ) տիտղոսի որը սակայն, աւելացնենք, գործածուած է միայն Խորենացուց և այն Արամազդի հատուածում և ոչ թէ իւր իսկական տեղում՝ Որմիզդ թագաւորի կշտին: Այս իսկ պատճառով էլ շատ կասկածելի է թէ երբ և իցէ՛ թէ կուզ հին պարսիկներից՝ «արաբ» բառը իրրեւ Որմիզդ Ա-ի տիտղոս գործածուած լինի, ուստի և Խորենացու մէջ այդ բառը պէտք է հասկանալ իւր սովորական հայերէն և ոչ թէ պարսիկներէն նշանակութեամբ: Եթէ միայն, աւելացնենք, այդ «կուշտումն» բառը չէ աղջատուածը կամ թարգմանական կրկնակր նախնական «կատար ումն» = «կատարումն» բնթերցուածի, ինչպէս այդ ես ենթադրում է իմ «Աւսումնասիրութեանը» մէջ (Խոր. պատմ. Ուս. Ա.):

Որպէս զի Խորենացին կարողանար թագաւոր չորս Որմիզդներին համեմատել Տիգրանների հետ՝ պէտք է իւր երկը գրելիս լինէր Եւ Որմիզդից (631 թ.) յետոյ (քանի որ անգիտանում է Ա. Որմիզդի գոյութիւնը), այն է 7րդ դարի առաջին կիսում, մի բան որ շատ նպաստաւոր կլինէր պ. կարիէրի վերջին ենթադրութեանցը Խորենացու պատմութեան գրութեան ժամանակի մասին:

Ահա այս և ուրիշ մի քանի մանր նկատողութիւններ արդէւք եղան ինձ համոզուելու պ. Մուսնի բացատրութեանը: Տիրանուն վարդապետի (տես սոյն աշխատութեան § 9) մի հատուածը իմ մէջ նոր մտածմունքների ա-

ռիթ եղաւ: Տիրանունն ստու՛մ է իւր լուծմանց մէջ. «Թողրե զանիրաւութիւն ժողովրդեան քոյ զոր յանցեան յորթն Տրոփրովստու և ի Թամուզ, ի պատկերն նախանձաւորութեան (ձեռ. նախանձաւորութեան): ի շրէ+թէ+Քաշ[ն], որ կայր ի յանցս և ի մուտս տաճարին սրբութեան» զոր հայք Արամազդ և այլք ջուս ասեն» (ՄԽԳ):

Այս հատուածից պարզուում է երկու բան. ա) որ ասորոց Թամուզը հայերը կարող էին թարգմանել և Արամազդ, բ) որ Թամուզը (ուրեմն և թարգմանութեանց մէջ՝ Արամազդը) չէր դէմքով էր Սուրբ Գլքի մէջ Թամուզը յիշուում է մի անգամ միայն յակնակ - յանուանէ. «Եւ ետոյժ զիս առաջի գրան տանն տեառն, որ հայեր ընդ հիւսիսի և ահա նստէին անդ կանայք և ողբային զԹամուզ» (Դղեկ Ք. 14): Թամուզին են անհարկում և հետեւեալ ասացուածները. «կացոյց զիս ի նախադուռն զբանն ներքնոյ որ հայի ընդ հիւսիս, ուր էր արձան պատկերին Նախաձեռն ստացողին» (նոյն. 3): — «Եւ ահա ի հիւսիսոյ կողմանէ ի վերայ գրան սեղանոյն ուր կայր պատկերն Նախաձեռն ի մուտս գրանն որ հայեր ընդ արեւելս» (նոյն. 5):

Խորենացուց առաջ, հինգերորդ դարի ասորական թարգմանութեանց մէջ, Եփրեմ Խորեն է յիշում շրէ+թէ+պատկերը (=Թամուզ). «Որթ յանապատին... և պատկերն չորեքդիմի՝ Մանասէին» (Համարարբ.): Մի ուրիշ տեղ. «Ուղղեաց (Մանասէ) զպատկերն շրէ+թէ+թա՛ւ ի տաճարին տեառն» (Եփր. մեկ. Մնաց. գլ. Գ. վ կենեա. 183: Տարեւադրութիւն հատ. Ա. էր. 490): Յիշում է և Բարսեղը. «Մանասէ շրէ+թէ+թէ զկուռնն ի տաճարին աստուծոյ եղ, զի ուստի արդեօք և եկեցէ որ, կուռնն երկիր պաղցէ» (Բարս. ճառք ապաշ. տես Հայկ. բռք.): Կան և Խորենացուց յետոյ՝ շրէ+թէ+թէ կուռքը յիշողներ, ինչպէս օր. Ներ. Ծնորհային (Յիսուս-Որդի) և ինչ, և ինչ: Բայց Տիրանունն է իմ զիտեցածովը որ ասանելով Եփրեմի Համարարբուից անապատի «որթի» և «Նախաձեռն ստացողին» շրէ+թէ+թէ+թա՛ւ

պարիէն յիշատակութիւնը ի միասին աւելցնում է նաև թամուզ անունը Արամազդ թարգմանութեամբ:

«Արհաճանապատեա կարծուով է թէ, թամուզ էր Փիւնիկեցոց Արոնիսը և թերևս կղիպտացոց Ոսիրիսը: Արոնիսի առասպելեալ մասնն ու յարութիւնը որ կարծուով է թէ նշանակէր արեգական մեկնելուն և դառնալուն, տօնուով էր ամառնային արևադարձի ժամանակի նախ ողբերով և ապա ուրախութեամբ և անտակ ինչը քննելով» (բառար. Ս. Գրոցի կ. Պոլիս 1891):

Մեր ձեռագիր չիմն բառարաններն էլ ապիս են «Թամուզն Արոնիս է» մեկնութիւնը (աւս. ցուց. Գեորգ կաթ. № 37): Չունիմ ձեռքի տակ այս խնդրի մասին նոր զիտնական զրքեր՝ ինչիրն աւելի ճշտելու համար:

Սակայն գտնէ ինձ համար պարզ է: որ այս կետումն էլ Սորենացին ինչպէս միշտ իւր պրիւրներում: օգտուել է և հարց գրուածքների վկայարանութիւնների սրբագրական (hagyographi) երկերի հայ լատինացիներէ: Այժմ միայն Արամազդի հատուածը յետին ընդմիջարկութիւն չէ: Հայոց մեծ Արամազդին մօտ դնում է չորից ևս չորս անուանեցելոց Արամազդ (—Թամուզ), յորոց մի է կունգ ոմն Արամազդ: Հաւանական է, որ թամուզի չորս դէմքերը աստուայ չորս եղանակներն էին պատկերացնում: որոնցից մեկը կարող էր լինել կնք (ձմեռը), կամ բաւ ևս կարող էր որ մի ակնարկութիւն կարող էր լինել թամուզի այս կամ այն կերպարանափոխութեանը կամ յարմարութեանը: Այս կէտը կպարզուի թամուզի աւելի մօտաւոր ծանօթութեամբ: եթէ միայն հաստատուին իմ այս ենթադրութիւնները:

(Հարուսակեի): ՄԻԱԲԱՆ.

**ՄԵԾ ԿՐԻՏԻԿՈՍԸ**

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

**Ա**նցիտ տարի՝ փետրուարի 21-ին (ն. տ. մարտի 5-ին) փարիզում յախ ձանուեց ժամանակակից ֆրանսիացի կրիտիկոսներից և պատմաբաններից ամենանշա-

նաւորը՝ Խպարդիտ Տէնի Այս անունը ինչպէս շատ արիշ այս տեսակ անունները գուցէ միայն Նորբերս հասած լինի հայ ընթերցողի ակամօքին: մինչդեռ Տէնն այն երևելի մատենագիրներից է, որոնց համարը դեռ իրանց կենդանութեան ժամանակ անցնում է հոյրների սահմաններից շատ հեռու: Տէնի գրուածները թարգմանուած են եւրոպական բոլոր գրականոր լեզուներով: Մի քանի համալսարաններում նորա կազմում են լուրջ ուսումնասիրութեան առարկայ: Գրականական քննադատութեամբ պարապողին մի քայլ անգամ չէ կարելի անել ներկայումս: Եւրոպացի ծանօթ լինելու նորա գրուածների հետ Նոյն իսկ գեղարուեստագէտները առիպուած են խոստովանել այն աչազին օգուտը որ ընձեռում է նրանց՝ Տէնի ընթերցումը: Անխոյանի է որ այդ տեսակ մի գրողի մասը ոչ միայն չէր կարող մնալ աննկատ: այլև առիթ պիտի տար բազմաթիւ կարծիքների յիշողութիւնների ու քննադատութիւնների երևան գալուն: Եւ յիշուի իւր մահուամբ Տէնը շատերին խօսեցրեց իւր մասին և խօսողները հասարակ լրագրական աշխատաւորներ չէին միայն, որ կոչուած են ի պատգով: կազմել իւրաքանչիւր փոքր ի շատէ նշանաւոր հանգուցեալի մահացուցալը: այլև մի շարք հոգեւորական և հեղինակաւոր մատենագիրներ: Գօգէ, դր Վօգիէ, Բրանդէ, Գերիէ, Արսէնիէ . . . . ահա ինչ յայտնի անունների են: հանդիպում մեծ ֆրանսիացի կրիտիկոսի բնաւորագիրների ու քննադատների երկայն ցանկում: Միայն մենք՝ հայ գրողներս ենք որ հուստարիմ մեր անգիտութեան ու անտարբերութեան: այս անգամ ևս չր կարողացածք օգտուել առիթից՝ Տէնի պէս բեղմնաւոր հեղինակի գործունէութեան հետ մեր ընթերցող հասարակութիւնը ծանօթագնելու: Մի քանի լրագրագետ ակնարկներով սպասուեց այն ամենը, ինչ ասելիք որ ունէր մեր գրականութիւնը մեծ կրիտիկոսի մասին: Բայց սրբան ճշիւն բան կը թաւին այդ ակնարկներու եթէ աչքի առաջ ունենանք Տէնի թողած